

Թէ կրօնական մոլեռանդութիւնը պահած չըլլայ գորղի մասունքներ մնացած Սելճուղեան շրջանէն, որոնք Պարսկաստանի տիրեցին մինչեւ 1508»⁽³⁰⁾ : Պէտք է յիշել որ նախ քան ժՁ դար Պարսկական գորղեր չունինք այժմ : Յանկարով հանդերձ նման մեծարժէք նշխարաց գիւտին, ըստ իս աւելորդ է ակնկալել : Եթէ նկատենք իսկ որ մինչեւ Սասանեան տիրապետութեան անկումը, երբ Արարները տիրեցին ու կողոպտեցին Պարսկաստանը, պարսկական գորղերը նոր տէրերուն աւարատենչութեան դոճ եղան ու փճացան, ակնկալելի էր որ գոնէ նախասելճուղեան եւ Սելճուղեան շրջանի գորղեր հասած ըլլային մեզի : Նոյնիսկ կը պակսին պարսկական գորղեր՝ ժԵ դարէն : Պարսկական մանրանկարներուն մէջ մինչեւ ժՁ դար ներկայացուած գորղերը որոշ կերպով «Կովկասեան» կամ «Հայկական» գծախումբերուն կը պատկանին : Այս կանուխ շրջանին մանրանկարչութեան արուեստը՝ ենթակայ է շինական արուեստին, նոյնիսկ իր մանրամասնութեանց մէջ, թէեւ երբեմն ցոյց կու տայ Հնդկ արուեստին իրապաշտ ծագկենկարչութիւնը :

Ուրեմն Սաւաֆեան շրջանի պարսկական վերածնունդին կը հանդիպինք միայն ներկայիս մեծապէս գնահատուած պարսկական գորղերուն : Այդ շրջանին էր որ մանր արուեստներու հետ ծագկեցաւ նաեւ Պարսիկ մանրանկարչութիւնը, կազմարարութիւնը, հիւսուածեղէնի եւ գորղի արհեստները :

Հետաքրքրական է որ հնագոյն պարսկական գորղի մը մասին կ'ըսուի․ «անոր (գորղին) մէջ կը դառնուին պարսկական, հայկական, կովկասեան, մոնղոլական յատկանիշներ, որոնք կը ծառայեն որոշելու շրջանը ուր գորղը հիւսուած է»⁽³¹⁾ : Այսպէս հնագոյն ճանչցուած պարսկական գորղի մը վրայ կան հայկական նշաններ : Ուշադրութեան արժանի է սա կէտը որ պարսկական գորղի մը մէջ կարելի է ակնկալել Պարսիկ արուեստի հետքեր իբր բնիկ արուեստի, Մոնղոլական արուեստի հետքեր իբր տիրապետող իշխանութեան, Կովկասեան արուեստին հոգին կազմած է հայկականը, սակայն այս գորղին մէջ գտնել նաեւ բուն Հայկական արուեստի հետքեր պարզապէս ցոյց կու տայ որ նուաճուած Հայաստան իսկ ի վիճակի էր իր մշակութային ազդեցութիւնը տարածել շրջակայ երկիրներուն վրայ : Երբ օր մը աւելի բան գիտնանք մեր արուեստի մասին քան ինչ որ այսօր նախնականապէս գիտենք, վստահ եմ որ չակնկալուած կերպով մեծ պիտի գտնենք Հայ արուեստի ազդեցութիւնը Արաբ, Սելճուղ, Պարսիկ եւ Թուրք արուեստներուն վրայ :

Պարսկական գորղարուեստին համար խոշոր անկիւնաքար մըն է Գեչանցի Մաքսուտի գորղը, շինուած 1540ին եւ այժմ ծանօթ իբր Ար-

⁽³⁰⁾ Oriental Rugs. — Walter A. Hawley, 1927, New York, p. 77.

⁽³¹⁾ Oriental Rugs. — Walter A. Hawley, p. 78.